ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀԱՆԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/63» ծածկագրով գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ 16.07.2026թ. ժամը 11:00

Ք. Գյումրի Գ. Նժդեհի 3/3

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Անահիտ Հովսեփյան

Հանձնաժողովի անդամներ՝ Սամվել Թումանյան

Էմմա Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տաթևիկ Խալաթյան

ժամը 11:00-ին գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը համարեց բացված

1. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին

(Անահիտ Հովսեփյան)

Մինչև հրավերի վերջնաժամկետը լրանալը, էլ.աճուրդ համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին ուղարկվել են հետվյալ հարցադրումները

Հարցադրում 1

Հարգելի՛ պատվիրատու, Հաշվի առնելով, տվյալ ապրանքի արտադրության, միջազգային փոխադրման, մաքսային ձևակերպումների և այլ օբյեկտիվ հանգամանքների պատճառով սահմանված ժամկետը, խնդրում ենք պարզաբանել՝ արդյո՞ք հնարավոր է սահմանել ավելի երկար մատակարարման ժամկետ:

Պարզաբանում 1

Հարգելի հարցատու, հնարավոր չէ սահմանել մատակարարման ավելի երկար ժամկետ,ապրանքի խիստ անհրաժեշտության պատճառով

Հարցադրում 2

Հարգելի գործընկեր Տեխնիկական բնութագրի վերջին տողում գրված է "Որակի վկայականներ (առկայություն) ISO13485 կամ համարժեք CE Mark (Directive 93/42/EEC) կամ համարժեք FDA": Խնդրում եմ պարզաբանել, թվով մեկ թե երկու հատ վկայական է պահանջվում: Ձեր թվարկած վկայականների անվանումներից հետո ստորակետ չկա դրված և տպավորություն է ստեղծվում, որ ընդամենը մեկ վկայական եք պահանջում:

Պարզաբանում 2

Հարգելի հարցատու ISO13485 վկայականի առկայությունը պարտադիր է, իսկ CE Mark (Directive 93/42/EEC) կամ FDA վկայայականներից պարտադիր է առնվազն մեկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

2. **Ընտրված մասնակիցների հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ-ի**

- «ԷՅԷՅ ԻՆԺԵՆԻՐԻՆԳ» ՍՊԸ -ի հայտում, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում , ֆիրմային անվանում, ապրանքային նշան, մակնիշ, արտադրողի անվանում լրացված են նույն տվյալները

Առաջարկվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարել շտկում և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը լրացնել հրավերի պահանջների համապատասխան

Ընդունվել է որոշում՝ կողմ –3 դեմ՝ –0

Փաստաթղթերի գնահատման նպատակով նիստը տեղափոխվում է սույն թվականի հուլիսի 20-ին ժամը 10:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ Անահիտ Հովսեփյան

Հանձնաժողովի անդամներ՝ Սամվել Թումանյան

Էմմա Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տաթևիկ Խալաթյան